«ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՈՆԵՐԱՅԻՆ ՔԱՐԹՐԻՋՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ԲԷՑ-ԳՀԱՊՁԲ-21/09-1»

ք. Երևան «19» 04. 2021թ.

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը, ի դեմս գլխավոր տնօրեն Հայկ Հարությունյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և «Պատրոն ՌՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, ի դեմս տնօրեն Կարեն Սուքիասյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Վաճառող) մյուս կողմից, (այսուհետ՝ Կողմեր) կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված Ապրանքը (այսուհետ՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել Ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք՝

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու Պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու Պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինում Պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ Պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված Ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու Պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է Պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել Ապրանքի մատակարարումը Պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել Պայմանագրով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից Պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Որակավորման և Պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **1 726 800** (մեկ միլիոն յոթ հարյուր քսանվեց հազար ութ հարյուր) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է Պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հաստատման օրվանից հաշված 30 աշխատանքային օրվա ընթացքում:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված Ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով Ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված Ապրանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին, Գնորդը Պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված Ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում Պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և Պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե Պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված Ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված Ապրանքը համարվում է ընդունված և Պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև Ապրանքի մատակարարումը սույն Պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից Պայմանագրի 3.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց Պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի՝ Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ Պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց Կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ Պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում,

մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով Պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում, և (կամ) Պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրերում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող Ապրանքի միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի Կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել Ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան Պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան Պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում Կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի Կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել Կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի Կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման Կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 19 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ	«Պատրոն ՌՄ» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Զ. Անդրանիկի 1	ք. Երևան, Վարդանանց 18/2
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Մալաթիա մ/ճ	«Էվոկաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1150001170630300	Հ/Հ 1660000446270100
ՀՎՀՀ 01522459	ՀՎՀՀ 00861057
Գլխավոր տնօրեն	Տնօրեն
Հ. Հարությունյան	Է. Մուրիասյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
«19» 04. 2021թ. կնքված
«ԲԷՑ-ԳՀԱՊՀԲ-21/09-1» ծածկագրով Պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի									մատակարարման		
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ապրանքային նշանը, մակիշը և արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը	Չափման միավորը	Միավորի գինը/ ՀՀ դրամ	Ընդհանուր գինը /ՀՀ դրամ	Առավելագույն ընդհանուր քանակը	հասցեն	Առավելագույն ենթակա քանակը	Ժամկետը
1	30121460/1	Տոներային քարթրիջ Canon LBP 6020B/6030 B մոդելի տպիչների համար	Patron CB435A/ CB436/ CE285/ 712/725 Ninestar Corporation	Համատեղելի քարթրիջ Canon LBP 6020B/6030B մոդելի տպիչների համար, 1600 էջ տպելիությամբ՝ միջազգային ստանդարտներով նախատեսված A4 թղթի 5% լցվածությամբ, առանց տպագրության երանգների աղավաղումների, առանց տպման մգության կորստի՝ մինչև տպման վերջին էջը ներառյալ: Քարթրիջը համապատասխանում է ISO/IEC 19752 միջազգային ստանդարտներին: Գույնը՝ սև, փաթեթավորված անջրաթափանց, սև պոլիէթիլային թաղանթով, որը պետք է գտնվի հերմետիկ գործարանային բարձիկի մեջ: Տուփը պարունակում է քարթրիջին վերաբերող տեղեկատվություն (մակնիշ, քարթրիջին համապատասխանող տպիչի մակնիշներ):	հատ	2700	594000	220	Ք. Երևան Զ. Անդրանիկի 1	220	Առաջին խմբաքանակի մատակարարումը առնվազն 1 հատ, պայմանագրի երկկողմ հաստատման օրվանից հաշված առնվազն 20 աշխատանքային օրվա ընթացքում, իսկ հաջորդ խմբաքանակների մատակարարումը պետք է իրականացվի մինչև 2021թ. դեկտեմբերի 20-ը՝ պատվիրատուի կողմից ներկայացված գրավոր պահանջագրի հիման վրա՝ պահանջագրի ներկայացման օրվանից հաշված առնվազն 1 աշխատանքային օրվա ընթացքում՝ ըստ պահանջագրով սահմանված քանակի:
2	30121460/9	Տոներային քարթրիջ Canon LBP	Patron CE505A/ CF280A/	Համատեղելի քարթրիջ Canon LBP 6310DN մոդելի տպիչի համար, 2700 էջ տպելիությամբ՝ միջազգային	հատ	3270	98100	30	Ք. Երևան Զ. Անդրանիկի 1	30	Առաջին խմբաքանակի մատակարարումը առնվազն 1 հատ, պայմանագրի

		6310DN մոդելի տպիչի համար	719 Ninestar Corporation	ստանդարտներով նախատեսված A4 թղթի 5% լցվածությամբ, առանց տպագրության երանգների աղավաղումների, առանց տպման մգության կորստի՝ մինչև տպման վերջին էջը ներառյալ: Քարթրիջը համապատասխանում է ISO/IEC 19752 միջազգային ստանդարտներին: Գույնը՝ սև, փաթեթավորված անջրաթափանց, սև պոլիէթիլային թաղանթով, հերմետիկ գործարանային բարձիկի մեջ: Տուփը պարունակում է քարթրիջին վերաբերող տեղեկատվություն (մակնիշ, քարթրիջին համապատասխանող տպիչի մակնիշներ):							երկկողմ հաստատման օրվանից հաշված առնվազն 20 աշխատանքային օրվա ընթացքում, իսկ հաջորդ խմբաքանակների մատակարարումը պետք է իրականացվի մինչև 2021թ. դեկտեմբերի 20-ը՝ պատվիրատուի կողմից ներկայացված գրավոր պահանջագրի հիման վրա՝ պահանջագրի ներկայացման օրվանից հաշված առնվազն 1 աշխատանքային օրվա ընթացքում՝ ըստ պահանջագրով սահմանված քանակի:
3	30121460/3	Տոներային քարթրիջ Canon LBP 2900 մոդելի տպիչի համար	Patron Q2612A/ FX-10/703 Ninestar Corporation	Համատեղելի քարթրիջ Canon LBP 2900 մոդելի տպիչի համար, 2000 էջ տպելիությամբ՝ միջազգային ստանդարտներով նախատեսված A4 թղթի 5% լցվածությամբ, առանց տպագրության երանգների աղավաղումների, առանց տպման մգության կորստի՝ մինչև տպման վերջին էջը ներառյալ: Քարթրիջը համապատասխանՈՒՄ է ISO/IEC 19752 միջազգային ստանդարտներին: Գույնը՝ սև, փաթեթավորված անջրաթափանց, սև պոլիէթիլային թաղանթով, հերմետիկ գործարանային բարձիկի մեջ: Տուփը պարունակում է քարթրիջին վերաբերող տեղեկատվություն (մակնիշ, քարթրիջին համապատասխանող տպիչի մակնիշներ):	հատ	2730	54600	20	Ք. Երևան Զ. Անդրանիկի 1	20	Առաջին խմբաքանակի մատակարարումը առնվազն 1 հատ, պայմանագրի երկկողմ հաստատման օրվանից հաշված առնվազն 20 աշխատանքային օրվա ընթացքում, իսկ հաջորդ խմբաքանակների մատակարարումը պետք է իրականացվի մինչև 2021թ. դեկտեմբերի 20-ը՝ պատվիրատուի կողմից ներկայացված գրավոր պահանջագրի հիման վրա՝ պահանջագրի ներկայացման օրվանից հաշված առնվազն 1 աշխատանքային օրվա ընթացքում՝ ըստ պահանջագրով սահմանված քանակի:

4	30121460/4	Տոներային քարթրիջ Canon MF4550d մոդելի տպիչի համար	Patron CE278A/ 726/728 Ninestar Corpo ration	Համատեղելի քարթրիջ Canon MF4550d մոդելի տպիչի համար, 2100 էջ տպելիությամբ՝ միջազգային ստանդարտներով նախատեսված A4 թղթի 5% լցվածությամբ, առանց տպագրության երանգների աղավաղումների, առանց տպման մգության կորստի՝ մինչև տպման վերջին էջը ներառյալ: Քարթրիջը համապատասխանում է ISO/IEC 19752 միջազգային ստանդարտներին: Գույնը՝ սև, փաթեթավորված անջրաթափանց, սև պոլիէթիլային թաղանթով, հերմետիկ գործարանային բարձիկի մեջ: Տուփը պարունակում է քարթրիջին վերաբերող տեղեկատվություն (մակնիշ, քարթրիջին համապատասխանող տպիչի մակնիշներ):	հատ	3000	6000	2	Ք. Երևան Ջ. Անդրանիկի 1	2	Առաջին խմբաքանակի մատակարարումը առնվազն 1 հատ, պայմանագրի երկկողմ հաստատման օրվանից հաշված առնվազն 20 աշխատանքային օրվա ընթացքում, իսկ հաջորդ խմբաքանակների մատակարարումը պետք է իրականացվի մինչև 2021թ. դեկտեմբերի 20-ը՝ պատվիրատուի կողմից ներկայացված գրավոր պահանջագրի հիման վրա՝ պահանջագրի ներկայացման օրվանից հաշված առնվազն 1 աշխատանքային օրվա ընթացքում՝ ըստ պահանջագրով սահմանված քանակի:
5	30121460/5	Տոներային քարթրիջ Canon Mf 211/Mf 231 մոդելի տպիչների համար	Patron CF283X/ 737 Ninestar Corpo ration	Համատեղելի քարթրիջ Canon Mf 211/Mf 231 մոդելի տպիչների համար, 2400 էջ տպելիությամբ՝ միջազգային ստանդարտներով նախատեսված A4 թղթի 5% լցվածությամբ, առանց տպագրության երանգների աղավաղումների, առանց տպման մգության կորստի՝ մինչև տպման վերջին էջը ներառյալ: Քարթրիջը համապատասխանում է ISO/IEC 19752 միջազգային ստանդարտներին: Գույնը՝ սև, փաթեթավորված անջրաթափանց, սև պոլիէթիլային թաղանթով, որը պետք է գտնվի հերմետիկ գործարանային բարձիկի մեջ: Տուփը պարունակում է քարթրիջին	հատ	3000	390000	130	Ք. Երևան Ջ. Անդրանիկի 1	130	Առաջին խմբաքանակի մատակարարումը առնվազն 1 հատ, պայմանագրի երկկողմ հաստատման օրվանից հաշված առնվազն 20 աշխատանքային օրվա ընթացքում, իսկ հաջորդ խմբաքանակների մատակարարումը պետք է իրականացվի մինչև 2021թ. դեկտեմբերի 20-ը՝ պատվիրատուի կողմից ներկայացված գրավոր պահանջագրի հիման վրա՝ պահանջագրի ներկայացման օրվանից հաշված առնվազն 1 աշխատանքային օրվա ընթացքում՝ ըստ պահանջագրով սահմանված

				վերաբերող տեղեկատվություն (մակնիշ, քարթրիջին համապատասխանող տպիչի մակնիշներ):							քանակի:
6	30121460/2	Տոներային քարթրիջ Canon Mf 3010 մոդելի տպիչի համար	Patron CB435A/ CB436/ CE285/ /712/725 Ninestar Corpo ration	Համատեղելի քարթրիջ Canon Mf 3010 մոդելի տպիչի համար, 1600 էջ տպելիությամբ՝ միջազգային ստանդարտներով նախատեսված A4 թղթի 5% լցվածությամբ, առանց տպագրության երանգների աղավաղումների, առանց տպման մգության կորստի՝ մինչև տպման վերջին էջը ներառյալ: Քարթրիջը համապատասխանում է ISO/IEC 19752 միջազգային ստանդարտներին: Գույնը՝ սև, փաթեթավորված անջրաթափանց, սև պոլիէթիլային թաղանթով, որը պետք է գտնվի հերմետիկ գործարանային բարձիկի մեջ: Տուփը պարունակում է քարթրիջին վերաբերող տեղեկատվություն (մակնիշ, քարթրիջին համապատասխանող տպիչի մակնիշներ):	հատ	2700	81000	30	Ք. Երևան Զ. Անդրանիկի 1	30	Առաջին խմբաքանակի մատակարարումը առնվազն 1 հատ, պայմանագրի երկկողմ հաստատման օրվանից հաշված առնվազն 20 աշխատանքային օրվա ընթացքում, իսկ հաջորդ խմբաքանակների մատակարարումը պետք է իրականացվի մինչև 2021թ. դեկտեմբերի 20-ը՝ պատվիրատուի կողմից ներկայացված գրավոր պահանջագրի հիման վրա՝ պահանջագրի ներկայացման օրվանից հաշված առնվազն 1 աշխատանքային օրվա ընթացքում՝ ըստ պահանջագրով սահմանված քանակի:
7	30121460/7	Տոներային քարթրիջ HP Laser Jet M127fn մոդելի տպիչի համար	Patron CF283A Ninestar Corpo ration	Համատեղելի քարթրիջ HP Laser Jet M127fn մոդելի տպիչի համար, 1500 էջ տպելիությամբ՝ միջազգային ստանդարտներով նախատեսված A4 թղթի 5% լցվածությամբ, առանց տպագրության երանգների աղավաղումների, առանց տպման մգության կորստի՝ մինչև տպման վերջին էջը ներառյալ: Քարթրիջը համապատասխանում է ISO/IEC 19752 միջազգային ստանդարտներին: Գույնը՝ սև, փաթեթավորված	հատ	2670	186900	70	Ք. Երևան Զ. Անդրանիկի 1	70	Առաջին խմբաքանակի մատակարարումը առնվազն 1 հատ, պայմանագրի երկկողմ հաստատման օրվանից հաշված առնվազն 20 աշխատանքային օրվա ընթացքում, իսկ հաջորդ խմբաքանակների մատակարարումը պետք է իրականացվի մինչև 2021թ. դեկտեմբերի 20-ը՝ պատվիրատուի կողմից ներկայացված գրավոր

				անջրաթափանց, սև պոլիէթիլային թաղանթով, որը պետք է գտնվի հերմետիկ գործարանային բարձիկի մեջ: Տուփը պարունակում է քարթրիջին վերաբերող տեղեկատվություն (մակնիշ, քարթրիջին համապատասխանող տպիչի մակնիշներ):							պահանջագրի հիման վրա՝ պահանջագրի ներկայացման օրվանից հաշված առնվազն 1 աշխատանքային օրվա ընթացքում՝ ըստ պահանջագրով սահմանված քանակի:
8	30121460/8	Տոներային քարթրիջ HP LaserJet M1536dnf մոդելի տպիչի համար	Patron CE278A/ 726/728 Ninestar Corpo ration	Համատեղելի քարթրիջ HP LaserJet M1536dnf մոդելի տպիչի համար, 2100 էջ տպելիությամբ՝ միջազգային ստանդարտներով նախատեսված A4 թղթի 5% լցվածությամբ, առանց տպագրության երանգների աղավաղումների, առանց տպման մգության կորստի՝ մինչև տպման վերջին էջը ներառյալ: Քարթրիջը համապատասխանում է ISO/IEC 19752 միջազգային ստանդարտներին: Գույնը՝ սև, փաթեթավորված անջրաթափանց, սև պոլիէթիլային թաղանթով, որը պետք է գտնվի հերմետիկ գործարանային բարձիկի մեջ: Տուփը պարունակում է քարթրիջին վերաբերող տեղեկատվություն (մակնիշ, քարթրիջին համապատասխանող տպիչի մակնիշներ):	հատ	3000	18000	6	Ք. Երևան Զ. Անդրանիկի 1	6	Առաջին խմբաքանակի մատակարարումը առնվազն 1 հատ, պայմանագրի երկկողմ հաստատման օրվանից հաշված առնվազն 20 աշխատանքային օրվա ընթացքում, իսկ հաջորդ խմբաքանակների մատակարարումը պետք է իրականացվի մինչև 2021թ. դեկտեմբերի 20-ը՝ պատվիրատուի կողմից ներկայացված գրավոր պահանջագրի հիման վրա՝ պահանջագրի ներկայացման օրվանից հաշված առնվազն 1 աշխատանքային օրվա ընթացքում՝ ըստ պահանջագրով սահմանված քանակի:
9	30121460/6	Տոներային քարթրիջ HP LaserJet 1018 մոդելի տպիչի համար	Patron Q2612A/ FX-10/703 Ninestar Corpo ration	Համատեղելի քարթրիջ HP LaserJet 1018 մոդելի տպիչի համար, 2000 էջ տպելիությամբ՝ միջազգային ստանդարտներով նախատեսված A4 թղթի 5% լցվածությամբ, առանց տպագրության երանգների աղավաղումների, առանց տպման	հատ	2730	81900	30	Ք. Երևան Զ. Անդրանիկի 1	30	Առաջին խմբաքանակի մատակարարումը առնվազն 1 հատ, պայմանագրի երկկողմ հաստատման օրվանից հաշված առնվազն 20 աշխատանքային օրվա ընթացքում, իսկ հաջորդ

				մգության կորստի՝ մինչև տպման վերջին էջը ներառյալ: Քարթրիջը համապատասխանում է ISO/IEC 19752 միջազգային ստանդարտներին: Գույնը՝ սև, փաթեթավորված անջրաթափանց, սև պոլիէթիլային թաղանթով, որը պետք է գտնվի հերմետիկ գործարանային բարձիկի մեջ: Տուփը պարունակում է քարթրիջին վերաբերող տեղեկատվություն (մակնիշ, քարթրիջին համապատասխանող տպիչի մակնիշներ):							խմբաքանակների մատակարարումը պետք է իրականացվի մինչև 2021թ. դեկտեմբերի 20-ը՝ պատվիրատուի կողմից ներկայացված գրավոր պահանջագրի հիման վրա՝ պահանջագրի ներկայացման օրվանից հաշված առնվազն 1 աշխատանքային օրվա ընթացքում՝ ըստ պահանջագրով սահմանված քանակի:
10	30121460/10	Տոներային քարթրիջ HP LaserJet P1102 տպիչի համար	Patron CB435A/ CB436/ CE285/ 712/725 Ninestar Corpo ration	Համատեղելի քարթրիջ HP LaserJet P1102 մոդելի տպիչի համար, 1600 էջ տպելիությամբ՝ միջազգային ստանդարտներով նախատեսված A4 թղթի 5% լցվածությամբ, առանց տպագրության երանգների աղավաղումների, առանց տպման մգության կորստի՝ մինչև տպման վերջին էջը ներառյալ: Քարթրիջը համապատասխանում է ISO/IEC 19752 միջազգային ստանդարտներին: Գույնը՝ սև, փաթեթավորված անջրաթափանց, սև պոլիէթիլային թաղանթով, որը պետք է գտնվի հերմետիկ գործարանային բարձիկի մեջ: Տուփը պարունակում է քարթրիջին վերաբերող տեղեկատվություն (մակնիշ, քարթրիջին համապատասխանող տպիչի մակնիշներ):	հատ	2700	189000	70	Ք. Երևան Զ. Անդրանիկի 1	70	Առաջին խմբաքանակի մատակարարումը առնվազն 1 հատ, պայմանագրի երկկողմ հաստատման օրվանից հաշված առնվազն 20 աշխատանքային օրվա ընթացքում, իսկ հաջորդ խմբաքանակների մատակարարումը պետք է իրականացվի մինչև 2021թ. դեկտեմբերի 20-ը՝ պատվիրատուի կողմից ներկայացված գրավոր պահանջագրի հիման վրա՝ պահանջագրի ներկայացման օրվանից հաշված առնվազն 1 աշխատանքային օրվա ընթացքում՝ ըստ պահանջագրով սահմանված քանակի:

12	30121460/12	Տոներային քարթրիջ HP LaserJet 1020 տպիչի համար	Patron Q2612A/ FX-10/703 Ninestar Corporation	Համատեղելի քարթրիջ LaserJet 1020 մոդելի տպիչների համար, 2000 էջ տպելիությամբ՝ միջազգային ստանդարտներով նախատեսված A4 թղթի 5% լցվածությամբ, առանց տպագրության երանգների աղավաղումների, առանց տպման մգության կորստի՝ մինչև տպման վերջին էջը ներառյալ: Քարթրիջը համապատասխանում է ISO/IEC 19752 միջազգային ստանդարտներին: Գույնը՝ սև, փաթեթավորված անջրաթափանց, սև պոլիէթիլային թաղանթով, որը պետք է գտնվի հերմետիկ գործարանային բարձիկի մեջ: Տուփը պարունակում է քարթրիջին վերաբերող տեղեկատվություն (մակնիշ, քարթրիջին համապատասխանող տպիչի մակնիշներ):	հատ	2730	27300	10	Ք. Երևան Զ. Անդրանիկի 1	10	Առաջին խմբաքանակի մատակարարումը առնվազն 1 հատ, պայմանագրի երկկողմ հաստատման օրվանից հաշված առնվազն 20 աշխատանքային օրվա ընթացքում, իսկ հաջորդ խմբաքանակների մատակարարումը պետք է իրականացվի մինչև 2021թ. դեկտեմբերի 20-ը՝ պատվիրատուի կողմից ներկայացված գրավոր պահանջագրի հիման վրա՝ պահանջագրի ներկայացման օրվանից հաշված առնվազն 1 աշխատանքային օրվա ընթացքում՝ ըստ պահանջագրով սահմանված քանակի:իսկ հաջորդ խմբաքանակների մատակարարումը պետք է իրականացվի մինչև 2021թ. դեկտեմբերի 20-ը՝ պատվիրատուի կողմից ներկայացված գրավոր պահանջագրի հիման վրա՝ պահանջագրի ներկայացման օրվանից հաշված առնվազն 1 աշխատանքային օրվա ընթացքում՝ ըստ պահանջագրով սահմանված քանակի:

Այլ պայմաններ*	
Այլ	Երաշխիք՝ ըստ տեխնիկական բնութագրի. Մատակարարը պետք է երաշխավորի մատակարարվող բոլոր ապրանքների որակը և տպագրության որակական հատկանիշները ըստ ISO/IEC 19752 ստանդարտի, տպագրության երանգները, տպման մգությունը, քանակը և այլն: Մատակարարված բոլոր ապրանքների օգտագործման ընթացքում տեխնիկական նկարագրին չհամապատասխանող թերություններ հայտնաբերվելու դեպքում մատակարարը պարտավոր է վերացնել թերությունները, հայտի ներկայացման հաջորդ աշխատանքային օրվա ընթացքում, իր միջոցներով և իր հաշվին (նաև տեղափոխումը):

* Ապրանքի տեղափոխումն ու բեռնաթափումն իրականացնում է Վաճառողը.
* Ապրանքները պետք է լինեն չօգտագործված, նոր և որակյալ.

ԳՆՈՐԴ

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Զ. Անդրանիկի 1
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Մալաթիա մ/ճ
Հ/Հ 1150001172630300
ՀՎՀՀ 01522459
Գլխավոր տնօրեն՝

Հ. Հարությունյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

«Պատրոն ՌՄ» ՍՊԸ
ք. Երևան, Վարդանանց 18/2
«Էվոկաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 16600004462701 00
ՀՎՀՀ 00861057
Տնօրեն՝

Գ. Սարգսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
«19» 04. 2021թ. կնքված
«ԲԷՅ-ԳՀԱՊՀԲ-21/09-1» ծածկագրով Պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի						
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021 թ-ին՝ ըստ եռամսյակների, այդ թվում			
			II եռ./2021թ./	III եռ./2021թ./	IV եռ./2021թ./	Ընդամենը
1	30121460/1	Տոներային քարթրիջ Canon LBP 6020B/6030B մոդելի տպիչների համար	594000	594000	594000	594000
2	30121460/9	Տոներային քարթրիջ Canon LBP 6310DN մոդելի տպիչի համար	98100	98100	98100	98100
3	30121460/3	Տոներային քարթրիջ Canon LBP 2900 մոդելի տպիչի համար	54600	54600	54600	54600
4	30121460/4	Տոներային քարթրիջ Canon MF4550d մոդելի տպիչի համար	6000	6000	6000	6000
5	30121460/5	Տոներային քարթրիջ Canon Mf 211/Mf 231 մոդելի տպիչների համար	390000	390000	390000	390000
6	30121460/2	Տոներային քարթրիջ Canon Mf 3010 մոդելի տպիչի համար	81000	81000	81000	81000

7	30121460/7	Տոներային քարթրիջ HP Laser Jet M127fn մոդելի տպիչի համար	186900	186900	186900	186900
8	30121460/8	Տոներային քարթրիջ HP LaserJet M1536dnf մոդելի տպիչի համար	18000	18000	18000	18000
9	30121460/6	Տոներային քարթրիջ HP LaserJet 1018 մոդելի տպիչի համար	81900	81900	81900	81900
10	30121460/10	Տոներային քարթրիջ HP LaserJet P1102 տպիչի համար	189000	189000	189000	189000
12	30121460/12	Տոներային քարթրիջ HP LaserJet 1020 տպիչի համար	27300	27300	27300	27300

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ԳՆՈՐԴ

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Զ. Անդրանիկի 1
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Մալաթիա մ/ճ
Հ/Հ 1150001772630300
ՀՎՀՀ 01522459
Գլխավոր տնօրեն՝

Հ. Հարությունյան
/ստորագրություն/
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

«Պատրոն ՌՄ» ՍՊԸ
ք. Երևան, Վարդանանց 18/2
«Էվոկաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 16600004462701 00
ՀՎՀՀ 00861057
Տնօրեն՝

Կ. Սուքիասյան
/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված N 3
« 19 » 04 2021թ. կնքված
«ԲԷՑ-ԳՀԱՊՀԲ-21/09-1» ծածկագրով Պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ Ապրանքները՝

N	Մատակարարված Ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ Պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ Պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«19» 04. 2021թ. կնքված
«ԲԷՑ-ԳՀԱՊՀԲ- 21/09-1» ծածկագրով Պայմանագրի

ԱԿՏ N _____

Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը Պայմանագրի համարը
Պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված Ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն